01.06.2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆԻՆ

ՍՈՆՆԱ ՍՈՒՐԵՆԻ ԱՂԵԿՅԱՆԻՑ

Իրազեկում
(հավաք-երթ անցկացնելու մասին)

ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 7-րդ, 9-14-րդ հոդվածների պահանջներով, իրազեկում եմ, որ 2026 թվականի հունիսի 4-ին անկացնելու եմ հավաք-երթ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանում՝ հանդես գալով որպես հավաք-երթի կազմակերպիչ ու ղեկավար: Ստորև ներկայացնում եմ «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով սահմանված իրազեկմանը ներկայացվող պահանջների մասով հետևյալ տեղեկությունը՝

1. Հավաք-երթի անցկացման վայր՝ Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի «Հանրապետության հրապարակ» մետրոպոլիտենի կայարանի շրջակա տարածք (Արամ Մանուկյանի հուշարձանի արձանի մոտակայքում):
2. Հավաք-երթի անցկացման սկիզբ և ավարտ՝ 2026 թվականի հունիսի 4՝ ժամը 19:00 – 2026 թվականի հունիսի 4՝ ժամը 21:00:
3. Հավաք-երթի նպատակ՝ նախընտրական քարոզչություն:
4. Հավաք-երթի մասնակիցների սպասվող թիվը՝ 4000 մարդ:
5. Հավաք-երթի ընթացքում օգտագործվելու են բարձրախոսներ, դրոշներ, ձայնի ուժեղարարներ: Հավաքի և երթի ընթացքում օգտագործվելու է նաև Պիկապ ավտոմեքենա՝ ձայնի ուժեղարարներով:
6. Հավաք-երթի ընթացքում անցկացվելիք երթի վերաբերյալ տեղեկատվություն – տևողությունը՝ 19:15-21:00: Ուղղությունը՝ «Հանրապետության հրապարակ» մետրոպոլիտենի կայարանի շրջակա տարածք – Նալբանդյան փողոց – Նալբանդյան փողոցի և Սայաթ Նովա պողոտայի խաչմերուկ – Սայաթ Նովա պողոտա – Ֆրանսիայի հրապարակ – Մաշտոցի պողոտա – Թումանյան փողոցի և Մաշտոցի պողոտայի խաչմերուկ – Թումանյան փողոց – Թումանյան փողոցի և Հյուսիսային պողոտայի խաչմերուկ – Ազատության հրապարակ:

7. Հավաք-երթին կարգադրիչներ չեն լինելու:
8. Սոննա Սուրենի Աղեկյանի՝ որպես հավաքի կազմակերպչի և ղեկավարի տվյալները

Վերոգրյալի հաշվառմամբ խնդրում եմ՝
1. ապահովել նշված հավաքին մասնակցողների իրավունքների լիարժեք իրացումը:
2.սույն իրազեկման քննարկումը, դրա վերաբերյալ ակտերի ընդունումը և տեղեկացումն իրականացնել «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքին համապատասխան՝ ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված համաչափության և վարչարարության մյուս հիմնարար սկզբունքներով,
3. սույն իրազեկումը ընդունել ի գիտություն:

Կից ներկայացնում եմ՝
1. Անձը հաստատող փաստաթղթի պատճենը:

Հանրային հավաքի
կազմակերպիչ և ղեկավար
Սոննա Սուրենի Աղեկյան

Ստորագրող
ՍՈՆՆԱ ԱՂԵԿՅԱՆ
6001800197

2026-06-01 17:05:55 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից